ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
<<ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ>> ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPABLIC OF ARMENIA
MUNICIPALITY OF YEREVAN
<<ARSHAKUNYATS>>
POLIKLINIC JSC

ՀՀ0026 ք. Երևան, Արշակունյաց պողոտա 43
Հեռ. 44-02-12

№ 09/209

<<02>> սեպտեմբերի 2014 թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Արշակունյաց>> պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

**Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում ԱՇՊ-ՇՀԱՊՁԲ-11/4-4**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Արշակունյաց>> պոլիկլինիկա ՓԲԸ, ք. Երևան, Արշակունյաց պող. 43շ. հասցեով, մինչև **2014թ. սեպտեմբերի 12-ը, ժամը 09:30-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Արշակունյաց>> պոլիկլինիկա ՓԲԸ -ի շենքում, ք. Երևան, Արշակունյաց պող. 43շ հասցեով, **2014թ սեպտեմբերի 12-ին, ժամը 09:30-ին**:

Գնման առարկա է հանդիսանում <<Արշակունյաց>> պոլիկլինիկա ՓԲԸ -ի կարիքների համար՝ **դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը**:

<<Արշակունյաց>> պոլիկլինիկա ՓԲԸ -ի կարիքների համար՝ **դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման** (որոնք կազմված են՝ **40** չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) **N 10** հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (**Հավելված N 5** ), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

բ. Գնային առաջարկ (**Հավելված N 5.1** ): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4** ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Արշակունյաց>> պոլիկլինիկա ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **ashp.gnumner@hotmail.com**:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման

համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին, ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով

Տնօրեն՝ Գ.Ս. Պետրոսյան